

Կ Ա Ր Ծ Ի Ք

Վարդիթեր Իվանի Հակոբյանի «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները»

**Ժ. 02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Հրապարակային պաշտպանության ներկայացված բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը արդիական, միջգիտակարգային տիրույթում իրականացված, արժեքավոր հետազոտություն է, որն անկասկած ունի թե՛ տեսական և թե՛ հատկապես գործնական նշանակություն:

Ատենախոսությունը նվիրված է հաղորդակցական լեզվաբանության առավել արդիական ոլորտներից մեկի՝ խոսքի ձևավորման և ընկալման առանձնահատուկ դրսևորումների ուսումնասիրությանը որոշակի պայմանների և/կամ համատեքստի դիտանկյունից: Հաղորդակցության տեսության այս ոլորտը գտնվում է լեզվագործաբանության և դիսկուրս վերլուծության հետազոտական հետաքրքրությունների խաչմերուկում. դիսկուրս վերլուծությունը՝ սոցիալ-մշակութային համատեքստի/իրավիճակի և համապատասխան լեզվանյութի ուսումնասիրություն, և լեզվագործաբանությունը՝ որպես լեզվական ու խոսքաստեղծ միավորների և դրանց կիրառության պայմանների միջև հարաբերությունների ուսումնասիրություն, կարճ ասած «մտադրություն – կոդավորում – ապակոդավորում – ներազդեծություն», այսինքն, ինչպես նշում է Թյան Վան Դեյքը, ցանկացած դիսկուրս վերլուծություն նախատեսում է գործաբանության միջամտություն և դառնում է մեկ հիբրիդային հետազոտություն:

Երբ կարդացի ատենախոսության վերնագիրը, անկեղծ ասած մտածեցի, որ նման հիբրիդային հետազոտության հետ գործ ունենք, քանի որ պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը ենթադրում է այս երկու վերլուծական մեթոդների համակցությունը: Սակայն սպասելիքներս չարդարացան:

Այսօր խոսքս ուզում եմ կառուցել հետևյալ կերպ՝ վերլուծել հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը բաժին առ բաժին, նշելով միաժամանակ դրանց դրական և վիճահարույց պահերը:

Եվ այսպես սկսեմ վերնագրից՝ «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունները»: Թեման այս ձևակերպմամբ՝ ենթադրում է ուղղակի և անուղղակի հաղորդակցական ակտերի, հասցեատիրոջ վրա ներազդելու լեզվական միջոցների բավականին լայն և համալիր լեզվագործաբանական հետազոտություն: Սակայն, երբ ծանոթանում ես աշխատանքին, ակնհայտ է դառնում, որ հետազոտության կիզակետում են գտնվում քաղաքավարության իմպլիկատորայի դրսևորման օրինաչափությունները պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների ոլորտում: Ինչ՞ու այդ պարագայում չներկայացնել խնդրո առարկան վերնագրում՝ առավելա, որ Ներածությունում (էջ 8) հստակ ձևակերպված է ատենախոսության **նպատակը** (մեջբերում եմ բառացի). «... բացահայտել քաղաքավարության իմպլիկատորայի, դրա տեսակների, քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման առկայացման առանձնահատկությունները պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում՝ լեզվագործաբանության դիրքերից»: Ժամանակի սղության պատճառով ես չեմ կրկնի առաջադրված խնդիրները, բայց այստեղ էլ ուսումնասիրության առարկա է դարձել քաղաքավարության իմպլիկատորայի առկայացումն իր տարբեր դրսևորումներով՝ երևույթ, որը բազմիցս ուսումնասիրվել է և գիտական հետազոտությունների շարքում գրավում է իր ուրույն տեղը, չնայած, ինչպես արդարացիորեն նշում է ատենախոսն աշխատանքի **նորույթը** ձևակերպելիս (էջ 8), առաջին անգամ փորձ է արվում

քննության առնել և վերլուծել քաղաքավարության իմպլիկատորայի համատեղ կառուցման բնույթը պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներում:

Կցանկանայի լսարանի ուշադրությունը կենտրոնացնել նաև ատենախոսի կողմից նշված՝ աշխատանքում կիրառված մեթոդաբանությանը: Ներածության էջ 9-ում հեղինակը գրում է (մեջբերում եմ բառացի). «... աշխատանքում ուսումնասիրությունը կատարվել է համատեքստային-իրադրային, զուգադրական և նկարագրական, լեզվագործաբանական վերլուծության **մեթոդների** համադրությամբ...»: Սակայն լեզվագործաբանական վերլուծության մեթոդը լիարժեք չի կիրառված ատենախոսությունում, ինչի մասին կխոսեմ ավելի ուշ՝ վերլուծական նյութը մեկնաբանելիս: Բացի այդ կցանկանայի լսել ատենախոսի պարզաբանումը զուգադրական մեթոդի վերաբերյալ՝ ինչպես է նա հասկանում և կիրառում այդ մեթոդն իր աշխատանքում:

Ատենախոսության առաջին տեսական գլուխը «Լրագրային հարցազրույցների առանձնահատկությունները», որը ներառում է երեք ենթագլուխ, բավականին հաջողված է և բնութագրում է հարցազրույցի՝ որպես սոցիալական փոխազդեցության մասին վերլուծության էությունը, տեսական հիմքերն ու գիտական ընկալումները, դիտարկվում են պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների առանձնահատկություններն ինչպես նաև հարցազրույցներում առավել հաճախակի հանդիպող բաց և փակ հարցերի նկարագրությունը: Այս ամենն անտառակույս անհրաժեշտ է լուսաբանել՝ առաջադրված խնդիրների իրականացման գործընթացն ապահովելու նպատակով: Ողջունելի է այն փաստը, որ յուրաքանչյուր ենթագլուխ ավարտվում է ատենախոսի ամփոփումներով և եզրահանգումներով, ինչը վկայում է հեղինակի հետազոտական ներուժի և վերլուծական իրազեկությունների մասին:

Ատենախոսության երկրորդ գլուխը «Քաղաքավարության իմպլիկատորայի և դրա տեսակների դրսևորման օրինաչափությունները» նույնպես տեսական բնույթ է կրում և քննարկման հարթակ է հանում իմպլիկատորան՝ որպես գործաբանական երևույթ, քաղաքավարության իմպլիկատորայի էությունը, քաղաքավարության

իմպլիկատորայի առկայացման եղանակները հաղորդակցական դրսևորումների դիտանկյունից: Նշեմ, որ ատենախոսության այս բաժինն էլ, ուր քննության են առնվել գործաբանության՝ որպես ինքնուրույն գիտակարգի և լեզվաբանության մասնավոր բաժնի հիմնախնդիրները, Զ. Ռ. Սերլի խոսքային ակտի բնութագրիչները, Շ. Պարոնյանի խոսքային գործունեության և իրական հաղորդակցման ու փոխազդեցության լեզվագործաբանական գործառույթները, Հ. Փ. Գրայսի իմպլիկատորաների ձևավորվման մեխանիզմներն ու մաքսիմները, կարելի է համարել հաջողված իր հանգամանալից վերլուծության և մեկնության շնորհիվ:

Առանձնահատուկ կցանկանայի կանգ առնել այս բաժնի երրորդ ենթագլխի վրա, ուր ուսումնասիրության առարկա են դարձել քաղաքավարության իմպլիկատորայի տեսակների առկայացման եղանակները իրական օրինակների միջոցով: Ատենախոսը մանրամասն մեկնաբանում է հինգ օրինակ՝ հղումներ կատարելով տարբեր տեսաբանների հետազոտությունների, սակայն չի նշում թե որտեղից են վերցված օրինակները: Կցանկանայի ստանալ հստակ պատասխան նշված հարցիս:

Ատենախոսության երրորդ գլուխը («Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական վերլուծություն») նույնպես տրոհված է երեք ենթագլխի: Առաջին ենթագլխում ըստ էության դիտարկվում են քաղաքավարության իմպլիկատորաները, քննության են առնվում պաշտոնական հարցազրույցներում խրախուսող քաղաքավարության եղանակները արտալեզվական տիրույթի համատեքստում: Սակայն հարկ եմ համարում նշել, որ ինչպես ատենախոսության այնպես էլ այս բաժնի և իր երեք ենթագլուխների վերնագրերը ենթադրում են ոչ միայն քաղաքավարության իմպլիկատորաները, այլ լեզվագործաբանական վերլուծության բավականին ընթարցակ դաշտ իր ողջ հետազոտական գործիքաշարով հանդերձ:

Ատենախոսության այս գլխում հեղինակը դիտարկում է բազմաթիվ օրինակներ՝ իր եզրահանգումներն առավել հիմնավորված և համոզիչ ներկայացնելու նպատակով: Սակայն առաջին երկու ենթագլխում դիտվում է մի օրինաչափություն՝ մի շարք օրինակներում վերլուծությունը փոխարինվում է արդյունքի

արձանագրությամբ: Բերեմ միայն մեկ օրինակ. ատենախոսության էջ 92-ում հեղինակը քննության է առնում ռասսայական խնդիրներին վերաբերող Օփրայի խոսքը՝ մեջբերելով բավականին ծավալուն մի հատված: Հատվածին նախորդում է ատենախոսի դիտարկումը (մեջբերում եմ բառացի). «Օփրայի խոսքից հետևում է այն իմպլիկատուրան, որ նա արտահայտում է իր խոր անհանդուրժողականությունը ռասսայական սկզբունքներով առաջնորդվող զանգվածի հանդեպ: Այսպիսով, Օփրան ձևավորում է քաղաքավարության իմպլիկատուրա՝ անուղղակիորեն արտահայտելով իր կարծիքը՝ ուղղակի կերպով արտահայտելու փոխարեն»: Այնուհետև հատվածին հաջորդում է ատենախոսի եզրահանգումը (մեջբերում եմ բառացի). «Օփրայի խոսքից հետևում է այն իմպլիկատուրան, որ նա ամեն գնով փորձում է մարդկանց մեջ արթնացնել կարեկցանքի զգացողությունը, քանի որ ռասսայական խնդիրները դեռ արմատացած են հասարակության մեջ»: Հարց է ծագում. իսկ ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով, լեզվական ո՞ր միավորների օգնությամբ է իրականացվում այդ իմպլիկատուրան, այսինքն ու՞ր է հատվածի լեզվագործաբանական վերլուծությունը իր ողջ գործիքաշարով և ռազմավարություններով հանդերձ, որոնք հանգեցնում նման ամփոփման:

Ժամանակի սղության պատճառով նշեմ միայն նմանօրինակ դիտարկումների էջերը, ուր ատենախոսը գրում է «վերլուծենք», «դիտարկենք», «հետազոտենք» և առանց վերլուծության ներկայացնում է իր եզրահանգումները. էջեր 44, 45, 58, 63, 65, 66, 73, 90, 92, 96, 97, 98, 100, 101, 107, 108, 110, 111, 120, 130: Ի դեպ կցանկանայի կանգ առնել 90 և 120 էջերում քննության առարկա դարձած օրինակների վրա: Էջ 90-ում Օփրայի «*No? Get out!*» հարց-բացականչությունն առանց համապատասխան համատեքստի ամենևին հիմք չի դառնում խրախուսող քաղաքավարության համար՝ արտահայտելով հարցազրուցավարի անկաշկանդ պահվածքը և հիացմունքը Օբամայի հանդեպ: Իսկ էջ 120-ում՝ մեջբերում եմ օրինակն ու ատենախոսի եզրահանգումը. *AXELROD: Well, I would be remiss if I didn't tell you that I love you, man, and I'm so... OBAMA: Love you back, brother* ատենախոսի պնդումը «Նշենք նաև, որ իր հերթին Օբաման փոխադարձաբար արտահայտում է իր բարձր կարծիքը Աքսելրոդի մասին, որը հիմք է դառնում *խրախուսող*

քաղաքավարության համար: Անձնական հաճոյախոսությունների դրսևորումները, անշուշտ, արտացոլում են Աքսելրոդի և Օբամայի միջև եղած ջերմ հարաբերությունները» մնում է անավարտ, քանի որ եթե Բ. Օբամայի խոսքում *Love you back, brother* առկայացվում են «ջերմ հարաբերությունները», ապա ի՞նչ միջոցներով է արտահայտվում նրա բարձր կարծիքը Աքսելրոդի վերաբերյալ:

Վերջապես անցնենք այս բաժնի երրորդ ենթագլխին («Պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն»), ուր ատենախոսը ներկայացնում է պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցներից բազմաթիվ բավականին հաջող օրինակներ: Սակայն ինչպես այլ վերնագրերում, ընթերցողին փոքր ինչ շեղում է «լեզվագործաբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծությունը»: Հավանաբար, եթե վերնագրերում «վերլուծություն» բառը փոխարինվեր մեկ այլ եզրույթով, ապա սպասելիքներն էլ «խաբուսիկ» չէին լինի: Չեմ ուզում կրկնել նախապես ասածս լեզվագործաբանական վերլուծության վերաբերյալ, քանի որ այն ենթադրում է նույն իմպլիկատուրաների ավելի խորը վերլուծություն, որը կբացահայտեր դրանց՝ գործաբանության համար այդքան կարևոր «պերլոկուտիվ» արժեքը:

Կցանկանայի կանգ առնել նաև ատենախոսությունում տեղ գտած մի շարք խմբագրման ենթակա անճշտությունների վրա.

- Կարծում եմ «հարցվող» գոյականը փոքր ինչ խրթին է հնչում գիտական լեզվում: Փոխարենը կարելի է օգտագործել «զրուցակից» բառը, առավելևս, որ երբեմն ատենախոսությունում հանդիպում ենք հենց այս տարբերակը:
- Անհասկանալի է էջեր 28 և 39 տողատակի մեջբերումների նպատակը:
- Էջ 45-ում ատենախոսն օգտագործում է էթիոպիա հատուկ անունը, այն պարագայում, որ երկրի պաշտոնական անունը հայերենում Եթովպիա է:
- Էջ 56-ում օգտագործված է «մոդալ բայ» եզրը՝ «եղանակավորող բայի» փոխարեն:

- Էջ 63-ում հանդիպում ենք «մուսուլմանական աշխարհ» բառակապակցությանը, ուր «մուսուլմանական» բառը կարելի էր փոխարինել մեր լեզվական գինանոցում գոյություն ունեցող «մահմեդական» ածականով:
- Էջեր 137 և 138-ում օգտագործված է «բառային միջոց» եզրը, որն իմ կարծիքով կարելի է փոխարինել լեզվաբանությունում ավելի կիրառելի «լեզվական միավոր» եզրույթով:

Խոսքս ուզում եմ ավարտել լավատեսական երանգով: Ակնհայտ է, որ բոլոր դիտարկումներն ու առաջարկությունները կրում են խորհրդատվական բնույթ, չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժեքն ու նշանակությունը, իսկ ատենախոսը՝ ինքնուրույն գիտնականի ձևավորման շեմին ունի իր սեփական կարծիքը և պատասխանները ասվածի վերաբերյալ:

Եվ այսպես այսօր հրապարակային պաշտպանության է ներկայացված ինքնուրույն, խոսույթի և գործաբանական վերլուծության ու հաղորդակցության տեսության խաչմերուկում կատարված ծավալուն, տեսական և գործնական նշանակություն ունեցող աշխատանք: Ատենախոսությունն ունի կուռ և հստակ ձևավորում, գրված է պատշաճ մակարդակով և լեզվով:

Վարդիթեր Իվանի Հակոբյանի «21-րդ դարի ամերիկյան մամուլում պաշտոնական և ոչ պաշտոնական հարցազրույցների լեզվագործաբանական առանձնահատ-

կույթունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրն արտացոլում են նրա հիմնական բովանդակությունը:

Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող 009 մասնագիտական խորհրդի առջև Վարդիթեր Իվանի Հակոբյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ.02.07 (Ռոմանագերմանական լեզուներ) մասնագիտության գծով:

09.11.22

Գ.Ռ.Գասպարյան
բ.գ.դ., պրոֆեսոր



Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆեսոր
Գ.Ռ.Գասպարյանի ստորագրությունը
ԲՊՀ գիտքարտուղար



Հ.Փիլավջյան